

# ԱՐԱՄ ԵՐԿԻՐԸ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԻՍԵԱՆ

Հստ Մովսէս Խորենացու՝ Հայկի ժառանգների տիրոյթները միասնական մէկ պետութեան մէջ միաւորեց Արամ Նահապետը, եւ նրա անունով էլ օտարները մեր երկիրը կոչեցին Արմենիա. այսինքն, հայոց ազգային աւանդութեան համաձայն, Արմենիա անուան հիմքը, նախաձեւը «Արամ»ն է: Շումէրի եւ Աքաղի արքայ Նարամ-Մինի (Ք.ա. իջ. դար) հիւսիսային արշաւանքների մասին պատմող սկզբնաղբիւրներում գտնում ենք յիշատակուած Արամ կոչուող մի երկիր, որի վերաբերեալ տեղեկութիւնների տեղագրական քննութիւնը մեզ բերում է Հայկական Լեռնաշխարհ: Այդ երկրի մասին վկայող բնագրերը հրատարակուել են դարասկիզբին, սակայն, անհասկանալի պատճառներով (եւ զարմանալիօրէն) դուրս են մնացել հայագէտների ուշադրութիւնից: Զարմանալի եւ ցաւալի է նաեւ այն փաստը, որ Հայաստանի Հանրապետութեան մեծագոյն եւ մասնագիտական գրադարաններից<sup>1</sup> եւ ոչ մէկում չկան նշուած հրատարակութիւնները: Ուստի, մինչեւ նիւթի շարադրանքին անցնելը, մեր պարտքն ենք համարում նշել, որ ձեռքի տակ չունենալով սկզբնաղբիւրները՝ դրանց մասին տեղեկութիւնները քաղել ենք հիմնականում Ա. Քիֆիշինի «Հին շումէրների աշխարհագրական պատկերացումները Պատէսի Գուդէայի (Ք.ա. 2162—2137 թթ.) ժամանակաշրջանում» աշխատանքից<sup>2</sup>: Թէպէտ նման մօտեցումը, զուտ գիտական առումով, քննադատելի է՝ բայց եւ այնպէս՝ հարցի արծարծումը խիստ կարեւոր է: Հայաստանում սկզբնաղբիւրներ չունենալու պատճառով անհնարին է հարցի ուսումնասիրութեամբ զբաղուել գիտական պատշաճ մակարդակով: Բարձրացնելով հայագիտութեան համար կարեւոր այս հարցը՝ ակնկալում ենք որ նրա ըստ արժանւոյն լուծման գործում չատ մեծ կը լինի Սփիւռքի հայագէտների դերը, եթէ անգամ այն սահմանափակուի միայն արտասահմանից Հայաստան համապատասխան գրականութեան առաքմամբ:

\* \* \*

Բաւականին շատ է գրուել Նարամ—Սինի մինչեւ Հայկական Լեռնաշխարհի հարաւ—արեւմտեան փէշերը հասնելու մասին։ Յայտնի է Տիարպեքիրի մօտ նրա թողած յաղթակոթողը, որը վնասուած վիճակում այժմ պահում է Ստամբուլի Հին Արեւելքի Թանգարանում<sup>3</sup>։ Մեզ են հասել մի շարք բնագրեր, որոնք փառաբանում են նրա դէպի Հայկական Լեռնաշխարհի հարաւ—արեւմտեան շրջանները կատարած յաղթարշաւները<sup>4</sup>։ Սրանք բաւականաչափ յայտնի են Հայագիտութեանը։ Ստորեւ բերում ենք այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են Նարամ—Սինի դէպի Հայկական Լեռնաշխարհի հարաւ—արեւելեան շրջանները կատարած արշաւանքներին, որոնք դուրս են մնացել Հայագիտների ուշադրութիւնից։

Շումէրների պաշտամունքային կենտրոն Նիպուրում գտնուող էնլիլ աստծոյ տաճարից գտնուած մի արձանագրութեան համաձայն Նարամ—Սինը պատերազմել է Արամ (Արամ) եւ Ամ (Ամ) երկրների տիրակալ Հարշամաթքի (Harşamatki) դէմ, որի ընթացքում կործանել է Թիպար (Tibar) երկիրը<sup>5</sup>։

Մէկ այլ արձանագրութիւն պատմում է Սիմուրդ (Simurdum) երկրի նկատմամբ նրա տարած յաղթանակի եւ Սիմուրդումի եւ Արամէի (Արամե) տիրակալին գերեվարելու մասին<sup>6</sup>։

Նախ փորձենք ճշդել Թիպար երկրի տեղադրութիւնը, որը պէտք է որ գտնուած լինի Աքաղից դէպի Արամ եւ Ամ երկրներ տանող ճանապարհին։ Միջագետքի արքաներից մէկը՝ արձանագրել է, թէ դէպի հիւսիս կատարած իր արշաւանքի եօթներորդ օրն ինքը հասել է Առափիսա, քսաներորդ օրն անցել է Զապ գետն ու նուաճել Թապրա (Tabra) եւ Ուրբիլս (Uribilum) երկրները<sup>7</sup>։ Այս արձանագրութեան մէջ յայտնի են Առափիսան եւ Ուրբիլսումը. երկուսն էլ գտնուել են Տիգրիսի արեւելեան կողմում, Ուրբիլսում (յետագայում՝ Արբելա, այժմ՝ Էրբիլ) Մեծ եւ Փոքր Զապերի միջեւ է, իսկ Առափիսան՝ Փոքր Զապից հարաւ։ Թիպար/Թապրա երկրը նուաճուել է Առափիսայից եւ Փոքր Զապից յետոյ, Ուրբիլումի հետ, ինչը ցոյց է տալիս, որ այն գտնուել է երկու Զապերի միջեւ, վերջինիս հարեւանութեամբ<sup>8</sup>։ Շարունակելով Աքաղ—Թիպար/Թապրա (Tibar/Tabra) գիծը՝ դուրս ենք գալիս Արամ եւ Ամ երկրների հաւանական տարածաշրջանը՝ Վանայ լճից արեւելք եւ հարաւ—արեւելք, Ուրմիա լճից արեւմուտք ընկած շրջանները։

Երկրորդ արձանագրութեան մէջ ինդրոյ առարկայ երկիրը հանդէս է գալիս Սիմուրրում երկրի հետ նոյն տիրակալի իշխանութեան ներքոյ (ինչպէս առաջինում Ամի հետ)։ Դժուար է միանչանակ որակել երկու երկրների հանդէս գալը մէկ իշխանաւորի գլխաւորութեամբ. թերեւս կարելի է ենթադրել մէկի կողմից միւսի նուաճում, կամ, գուցէ, դա եղել է իւրօրինակ դաշինք, երբ երկուսի զօրքերը կուռել են նրանցից մէկի հրամանատարութեամբ, որին էլ միջագետեան բնագրերը կոչում են երկու երկրնե-

ըի տիրակալ: Յամենայնդէպս՝ այս արձանագրութեան մէջ ուշագրաւն այն է, որ Նարամ—Սինը յաղթում է Սիմուրրում երկրին, բայց գերեվարում է երկու երկրների տիրակալին, իսկ Արամէ երկրի նուաճման մասին խօսք չկայ: Սիմուրրումը յիշատակւում է հին արեւելեան այլ սկզբնաղբիւրների մէջ եւս եւ տեղադրում է Փոքր Զապի միջին հոսանքի լրջանում, ժամանակակից Ալլթընքէօփրի հնավայրի տեղում<sup>10</sup>: Առաջին արձանագրութիւնից պարզել էինք Արամէի երկու Զապերի միջնատարածքից հիւսիս գտնուելը, մի բան որ անուղղակիորէն վկայուած է այս արձանագրութեամբ եւս: Եթէ նուաճուում է Սիմուրրումը, իսկ Արամէի նուաճման մասին խօսք չկայ, նշանակում է աքաղական զօրքը չէ հասել Արամէ, այսինքն՝ այն աւելի հեռու (տուեալ դէպքում՝ հիւսիս) է եղել Աքաղից՝ քան Սիմուրրումը:

Ամփոփելով տեղագրական համառօտ այս վերլուծութիւնը՝ ուրուագծենք Արամ/Արամէ երկրի հնարաւոր տեղը. այն է՝ երկու Զապերի միջնատարածքից հիւսիս, Ուրմիա լճից արեւմուտք, Վանայ լճից արեւելք եւ հարաւ—արեւելք ընկած տարածքը (տես՝ քարտէս Ա.):

Հնագոյն որեւէ երկրի տեղը նշգրտութեամբ որոշելու անհնարինութեան դէպքում՝ հարկաւոր է լրացուցիչ տուեալներ փնտուել յետագայ ժամանակաշրջանների սկզբնաղբիւրներում: Նոյնպիսի մօտեցում է պահանջում Արամ/Արամէ երկրի պարագայում:



Մեր պարզած տարածաշրջանում է գտնուել Սարգոն Աշուրացու (Ք.ա. ԺԹ. դար) կողմից յիշուող Սիմէսեան Արմանին<sup>12</sup>: Այն թուարկուած է որպէս Աշուրի վեց մարզերից մէկը: Սիմէսին<sup>13</sup> տեղադրումը է Վանայ լճից հարաւ—արեւելք, ասուրա—բարելական սեպագրերի նշած Կիրրուրի երկրի հարեւանութեամբ, որը նոյնացւում է Աշխարհացոյցի Կրերեաց լեռնանցքի եւ թուվմա Արծրունու յիշատակած Կրերեաց գաւառի հետ եւ զբաղեցնում է Մեծ Զապի վտակ Լեւին Սուի հովիտը<sup>14</sup>: Ք.ա. Թ. դարում Ասորեստանի արքայ Սալմանասար Գ.ը Հայկական Լեռնաշխարհում յիշատակում է Արամալի<sup>15</sup> երկիրը: Ըստ արձանագրութեան՝ նրա զօրքը դուրս է եկել Արծաշքու (Արզաշքու) քաղաքից, հասել երիտիա լերանը, հոն թողել յուշակոթող, եւ ապա մուտք գործել Արամալի: Արամալիից դուրս գալով՝ զօրքը մտնում է Զանզիունա, ելնում է այնտեղից «Նայիրի երկրի ծովի» ափ<sup>16</sup>, եւ Գիլզան(ու) երկրով շարունակում ճանապարհը<sup>17</sup>: Արծաշքուն Արամ արքայի յայտնի մայրաքաղաքն է եւ նոյնացւում է Արծէշի կամ Արծէկի հետ<sup>18</sup>: Երիտիա լերան տեղադրութիւնը հաստատ որոշուած չէ: Արծաշքուն Արծէկի հետ նոյնացման դէպքում՝ այն համադրելի է Սիփան լերան հետ, իսկ Արծէշի հետ նոյնացման դէպքում՝ լեռը պէտք է տեղադրել նրանից արեւելք կամ հարաւ—արեւելք: Երկու դէպքում էլ մեր խնդրի համար էականն այն է, որ Արամալիի սահմանները տարածուել են

մինչեւ Վանայ լճի հիւսիս—արեւելեան ափերը: Զանգիունայի տեղն անորոշէ<sup>19</sup>, ինչը հնարաւորութիւն չի տալիս որոշելու Վանայ լճի ափ ասորեստանեան զօրքի դուրս գալու տեղը: Լճափից հեռանալով՝ զօրքը մտնում է Գիլզան(ու): Ըստ Աշուրնածիրպալ Բ.ի թողած գրաւոր աղբիւրների՝ ինքը Գիլզան(ու)ի հարկը ստացել է Կերրուրի եւ Զամուա երկրներում, իսկ Սալմանասար Գ.ի արձանագրութիւններում Գիլզան(ու)ն յիշում է Խուրուշքիայի<sup>20</sup>, Ուլմանիայի<sup>21</sup> եւ Մուծածիրի<sup>22</sup> հարեւանութեամբ՝ Վանայ լճից Աշուր տանող ճանապարհին<sup>23</sup>: Հետեւապէս այն պէտք է տեղադրել Մեծ Շապի աւազանի կենտրոնական շրջանում Խուրուշքիայի եւ Մուծածիրի միջեւ<sup>24</sup>:

Նոյն երկիրը Արմարիլի անուանաձեւով յիշատակուած է Սարգոն Բ.ի արձանագրութիւններում եւ նրան ուղղուած հետախուզական մի զեկուցագրում: Ք.ա. 714 թուին դէպի Վանի թագաւորութիւն կատարած նրա արշաւանքի նկարագրութեան մէջ Արմարիլին յիշում է Սանգիբութու երկրից յետոյ եւ Ուկիզուկու լեռից ու Այատու երկրից առաջ<sup>25</sup>: Սանկիբութուն համադրում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Գարիթեան գաւառի հետ, որը գրաւում էր Ուրմիա լճից հիւսիս եւ հիւսիս—արեւելք ընկած լայնարձակ մի շրջան<sup>26</sup>: Ելնելով նրա մարմարով հարուստ լինելու հանգամանքից, Կ.Ֆ. Լեհման—Հառուպտը Ուկիզուկու լեռը նոյնացնում է Վան քաղաքի մօտ գտնուող Զմզըմբ Տաղ քարաժայոի հետ<sup>27</sup>: Այատուն ընդգրկել է Վանայ լճի հարաւային եւ հարաւ—արեւելեան մերձափնեայ շրջանը, արեւելքում թերեւս հասնելով մինչեւ Վան քաղաքի մօտակայքը (Ուկիզուկու լեռը)<sup>28</sup>: Եւ վերջապէս՝ Սարգոն Բ.ին յղուած հետախուզական զեկուցագրում քննուող երկիրը նշում է Ուէսի/Ուայասի հետ միասին, իսկ վերջինս տեղաւորուում է Վանայ լճից հարաւ՝ Այաբույի եւ Խուրուշքիայի միջեւ<sup>29</sup>:

Հարկ է նշել, որ գրաւոր աղբիւրները պահպանել են քննուող երկրի ինը բերդաքաղաքների անունները՝ Բուրուզի, Խանդուր, Այալէ, Մինիշպալա, Արնա, Մինունակ, Շարնա, Արբու եւ Ռիար, որոնցից մի քանիսը կարելի է համադրել նշուած տարածքում յետագայ ժամանակներում յիշուող տեղանունների հետ<sup>30</sup>:

Այալէն համադրելի է Աշխարհացոյցում յիշուող Պարսկահայք նահանգի առաջին գաւառ Այլիի հետ<sup>31</sup>: Արբուն կարելի է նոյնացնել Աշուրնածիրպալ Բ.ի յիշատակած Արուբէ ընակավայրի հետ, որը գտնուելի մեզ յայտնի Կիրրուրիի հարեւանութեամբ<sup>32</sup>: Արբուն իր տեղադրութեամբ համընկնում է Աղբակի (Մեծ եւ Փոքր Աղբակ գաւառների) տարածքի հետ եւ չի բացառուում որ վերջինիս անունը ծագած լինի Արբու—Ալբա—Աղբակ ճանապարհով: Հնարաւոր է նաեւ, որ Արբա/Արուբէն իր անունը թողած լինի նոյն գաւառում յիշուող Արեւանոս քաղաքին<sup>33</sup>: Երկու դէպիում էլ



Արբուն տեղադրելի է Աղքակում: Արնան կարելի է համադրել Պարսկահայքի հինգերորդ՝ Առնա/Լոնայ գաւառի հետ, որի կենտրոնն եղել է Առնայ վանքը, այժմեան Դերիկ գիւղը<sup>34</sup>: Եւ վերջապէս՝ Խունդուրը<sup>35</sup>, որ, կըրկին հաշուի առնելով ասորեստանեան սեպագրերում ա-ի եւ ո-ի ու-ով փոխարինման, ժամանակի ընթացքում դ-ի ձ-ի եւ ձ-ի-ս-ի վերածման հնարաւորութիւնը, կարելի է ենթադրել տեղանուան փոփոխութիւն խանդուր-Խանձուր-Խանձոր-Խանասուր/ Խանասոր հերթականութեամբ: Իսկ Խանասոր բերդը, համանուն լեռնանցքը, գիւղը եւ դաշտը<sup>36</sup> գտնուում են Պարսկահայքի Սալմաստ գաւառում<sup>37</sup>:

Ի մի բերելով Արամալի/Արմարիլի երկրին վերաբերող Ասորաբաբելական գրաւոր աղբիւրների տուեալները՝ կարելի է պատկերացնել այդ երկրի հաւանական ընդգրկումը. դա Ուրմիոյ եւ Վանայ լճերի միջնատարածքն է՝ հարաւոր երիզուած Կորդուաց (Հաքիարի) լեռներով (տես՝ Քարտէս Բ.):

Արամալի/Արմարիլի երկրի տեղորոշումը կարեւոր է ոչ միայն Ք.ա. ԺԳ. գարում յիշատակուած Արամ/Արամէ երկրի տեղը պարզելու առումով՝ այլեւ մեր պատմութեան միւս ժամանակաշրջանների մի շարք հարցեր ճիշդ ընկալելու համար: Սարգոն Բ.ն հաղորդում է, թէ «Հարժուելով դէպի Արբու՝ Ուրսայի<sup>38</sup> հայրական տուն եւ [դէպի] Ռիար՝ իշտարտուրի<sup>39</sup> քաղաքը գնացի, դրանց շրջակայքի եօթ ընակավայրերը, որտեղ ընակուած էին նրա եղբայրները՝ նրա թագաւորական սերմը [եւ որտեղ] պաշտպանութիւնն ուժեղ էր, այդ քաղաքները աւերեցի...»<sup>40</sup>: Այսինքն՝ Արամալի/Արմարիլին տիրոյթն էր արքայական տոհմի: Յետագայում նրա անունը փոխարինուեց պահաւական ծագում ունեցող Վասպուրական<sup>41</sup> անուամբ, որը միանգամայն համապատասխանում էր նախկինում նրա ունեցած նշանակութեանը: Ուշագրաւ է Արբուի, որը հնարաւոր է տեղադրել Աղքակում (Արեբանոս քաղաք) կամ նոյնացնել վերջինիս հետ (Արբու-Ալբա-Աղքակ)<sup>42</sup> Ռուսայի «Հայրական տուն» կոչուիլը եւ շրջակայ ընակավայրերի՝ որոնց համար եւս ենթադրելի է Աղքակի սահմաններում գտնուելը՝ արքայական տոհմի միւս ներկայացուցիչներին պատկանելը: Եթէ ճիշդ է մեր տեղադրութիւնը եւ եթէ ասուածին աւելացնենք որ Աղքակը, իր Աղամակերտ կենտրոնով, եղել է Արծրունեաց տոհմի ժառանգական ուստանը՝ կարելի է ենթադրել որ այդ տոհմը Վանի թագաւորութեան արքայական ուղիղ ժառանգորդն է<sup>43</sup>, ինչով էլ նաև կարելի է բացատրել այդ տոհմի ներկայացուցիչների արքայական գահի նկատմամբ ունեցած յաւակնութիւնները:

Բայց սա՝ ի միջի այլոց:

Իսկ հիմա, երբ որոշուած է Արամ երկրի տեղը՝ վերադառնանք Ք.ա. Գ. հազարամեակ՝ հնարաւորութեան սահմաններում ճշելու համար նրա

Հետ յիշուող Ամ երկրի տեղադրութիւնը: Ա. Քիֆիշինը փորձում է այն նոյնացնել Ումանում երկրի հետ՝ Ամ–Ումանում կապը համեմատելով Արամ–Արմանումի հետ: Ումանումը յիշում է Գուգէայի Ք.ա. իԲ. դարի արձանագրութիւններում: «Ումանումից [եւ] Մենուա լեռներից... հսկայ քարարեկորներ բերուեցին»<sup>43</sup>: Ա. Քիֆիշինը չի փորձում կոնկրետացնել Ամ/Ումանումի տեղը<sup>44</sup>, իսկ բաւարարում է Մենուա անունը Վանի թագաւորութեան յայտնի արքայ Մենուայի (Ք.ա. 810–786) անուան հետ համեմատելով<sup>45</sup>: Եղիա Քասունին, որի մօտ Մենուան կը նշուի որպէս Մինի՝ այն նոյնացնում է Վանի թագաւորութեան ժամանակակից եւ նրա հարեւան Մանա երկրի եւ Երեմիայի Մարգարեութեան (ՄԱ., 27) Մինի թագաւորութեան հետ<sup>46</sup>: Մանա երկիրը տեղադրում է Ուրմիա լճի հարաւակողմում, եւ Ամ–Ումանում նոյնացման ճշդ լինելու դէպքում՝ Ամը կարելի է տեղադրել Արամ/Արամալիի եւ Մանայի միջեւ՝ Պարսկահայքի հարաւում եւ երկուսի հարեւանութեամբ, ինչը կը համապատասխանէ թէ Նարամ–Մինի եւ թէ Գուգէայի արձանագրութիւնների տուեալներին:

Վերջացնելուց առաջ նշենք մի կարեւոր եւ նուրբ հարց եւս, որի անտեսումը կամ բացթողումը կարող է մոլորութեան պատճառ դառնալ: Աքաղական աղբիւրների Արմանի եւ իբլայի բնագրերի Արմի երկրի տեղադրութեան հարցում զիտնականները բաժանուած են հիմնականում երկու խմբի: Մի խումբն այդ երկիրը տեղադրում է Հայկական Լեռնաշխարհի հարաւ–արեւելուտքում եւ յանձին դրա տեսնում է Արմենիա անուան հնագոյն յիշատակումը, միւս խումբը այն տեղադրելով Սիրիայում՝ այն կապում է արամէացիների հետ: Նոյնը կարող է վիճակուել եւ Արամ երկրին, մանաւանդ որ նրա անունը ճշգորէն համընկնում է թէ՝ Հին Կտակարանի Արամ Նահապետի եւ թէ հայոց Արամ Նահապետի անուանը: Տեղադրելով երկիրը ապագայ Մեծ Հայքի Վասպուրական եւ Պարսկահայք նահանգների տարածքում՝ անհրաժեշտ է ընդգծել որ արամէացիները առաջին անգամ Հայկական Լեռնաշխարհի հարաւ–արեւմտեան սահմաններում յիշում են Ք.ա. ԺԴ. դարի վերջերին, ընդ որում՝ նրանք այնտեղ հաստատուել էին նոյն դարի կէսերին՝ Բաբելոնից արեւմուտք ընկած տարածքներից գաղթելով հրւսիս<sup>47</sup>: Հետեւաբար ո՛չ փաստական եւ ոչ էլ տրամաբանական որեւէ հիմք կայ կարծելու, որ Ք.ա. ԺԴ. դարում արամէացիների անունով կարող էր կոչուել Հայկական Լեռնաշխարհի որեւէ շրջան<sup>48</sup>: Ընդհակառակը՝ կարող ենք միանգամայն համոզուած լինել, որ մենք գործ ունենք Արմենիա երկրի հնագոյն յիշատակութեան հետ, որը ճշդ եւ ճիշդ համընկնում է հայոց անուանաղիր նախնի Արամի անուանը<sup>49</sup>: Այն պէտք է դիտել մինչ–երուանդունեաց շրջանի Հայկական Լեռնաշխարհում յիշուած «ար(ա)մ» հիմքով տեղանունների հետ մի ընդհանուր համակարգում<sup>50</sup>: Սա հարց է, որի վրայ պէտք է հրաւիրուի արեւելագէտ-

Հայագէտների ուշադրութիւնը եւ դառնայ հանգամանալի ուսումնասիրութեան առարկայ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Խնչակիք են ՀՀ Ազգային, ՀՀ ԳԱԱ Ֆունտամենտալ, Պատմութեան և Արեւելագիտութեան Խնստիտուտների մասնագիտացած գրադարանները եւ Սատենադարանը:
2. Տես՝ Ա. Քիֆիշին, «Հին շումերների աշխարհագրական պատկերացումները Պատեսի Գուղեայի (Ք.ա. 2162–2137թթ.) ժամանակաշրջանում», *Պաղեսպինեան Ժողովածու*, պրակ թիւ 13/76, Լենինկրատ, 1965 (ոռուերէն):
3. Այս մասին տես՝ G.A. Barton, *The Royal Inscriptions of Sumer and Akkad*, New Haven/London, 1929, p. 141: Հմմտ. Մարտիրոս Ս. Գավուրճեան, *Արմէն և Հայ Անոնների Ծագումը և Ուրարդում*, Պէյրուր, 1973, էջ 16–17:
4. Այս արձանագրութիւնները ի մի են բերուած Գավուրճեանի վերոնշեալ աշխատութեան մէջ. տես՝ Գավուրճեան, էջ 7–32: Դրանց վերաբերեալ յայտնուած տեսակետների մասին մեր յօդուածը տես՝ Արտակ Սովոսիսեան, «Արմանի–Արմի Երկիրն ըստ արադական եւ երլայական աղբիւների», *Հայկագեան Հայագիրական Հանդէս*, հուն. ԺԳ., Պէյրուր, 1993, էջ 113–127:
5. Տես՝ F. Thureau-Dangin, "Une inscription de Naram-Sin," *Revue d'Assyriologie et d'Archéologie Oriental*, t. VIII, Paris, 1911, p. 199–201. (Ըստ՝ Ա. Քիֆիշինի): Յետայստ՝ RA:
6. J.-R. Kupper, *Les nomades en Mésopotamie au temps des rois de Mari*, Paris, 1957, p. 112–113. Քովերը յուում է հ. թ. Կելային. տես՝ MAD, I, n. 217, p. 110 եւ no. 220, p. 111–112. (Ըստ՝ Ա. Քիֆիշինի):
7. Հնարանը է Ծովզի արքան՝ Ք.ա. Ի.Ա. դարում:
8. H. de Genouillac, "Ancienne stele de victoire", RA, t. VII, Paris, 1909, p. 152 (Ըստ՝ Ա. Քիֆիշինի):
9. Ա. Քիֆիշինը հաղորդում է, որ Հ. տղ Ժենույեարը փորձում է կապել Թուպրա լեռները յունական Տառլոյրու–Տառուրրա– ի հետ եւ զուգահեռներ փնտում Մարաստանում: Թապարիի իշխանի անունն է Սարար–Էշու (Satar-Esu), որը համեմատելի է հներոպական Քշաքրայի (Kvatra) հետ: Տես՝ Քիֆիշին, էջ 66. յուում է RA, VII, p. 154:
10. *Հին Արեւելի Պատմութիւն*, մաս 1, *Միջազգեկոր*, Մոսկով, 1988, էջ 288 (ոռուերէն):
11. Հայագիտութեան մէջ շրջանառութեան մէջ են մտել Սարկոն Աշուրացու զահակալման հին բուազրութեամբ ընդունուած տարերուեր՝ Ք.ա. 1980–1948, որ ժամանակին գործածել էր Աղոնցը: Տես՝ Նիկողայոս Աղոնց, *Հայասպանի Պատմութիւն*, Երեւան, 1971, էջ 24: Նոր եւ այժմ ընդհանուր ճանաչում զտած բուազրութեան համաձայն նա զահակալել է Ք.ա. Ժօ. դարի կտերին: Տես՝ Է. Պիքըրմեն, *Հին Աշխարհի Ժամանակագրութիւն*, Մոսկով, 1975, էջ 186 (ոռուերէն):
12. Տես՝ Աղոնց, էջ 24–25:
13. Լեռնանցը է եւ Երկիր:
14. Ն.Վ. Յարութիւնեան, *Ուրարդուի Տպոնումիկան*, Երեւան, 1985, էջ 111–112 (ոռուերէն). տես նաև յուած գրականութիւնը: U.S. Երեւան, *Հայասպանը Ըստ «Աշխարհացոյց»ի*, Երեւան, 1963, էջ 61: Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Երեւան, 1985, էջ 400–401, 527, եւ ծանօթ. 263: Սիմեսեան Արմանիի տեղադրութեան մասին տես՝ Մովսիսեան, էջ 112–127:

15. Վանի քաջաւորութեան տեղանուններում շատ յայտնի են-լի-լէ եւ -րի-րէ տեղանուանացոյց վերջաւորութիւնները, որոնք աճշատելով Արամալի/Արմարիլ տեղանունից՝ կը ստանանք Ար/ա/նա:
16. Խմա՝ Վանայ լճի:
17. Ի.Ս. Տիակոնով, «Ասուրա-քարելական աղբիրները Ուրարտուի պատմութեան մասին», *Հիմնագույն Պատմութեան Լուսաբառ*, թի 2-4, Մոսկով, 1951, 27 (II, 54) (ռուսերէն):
18. Տես՝ Յարութիւնեան, էջ 34-35:
19. Նոյն, էջ 78-79:
20. Խորոշիան գտնուել է Վանայ լճից հարաւ, Արեւելեան Տիգրիսի (Բոհտան Սու) հովտում: Տես՝ Յարութիւնեան, էջ 231-232:
21. Ուզմանիան (Էլամունիա, Ազամուն) ասուրա-քարելական աղբիրներում յիշում է Կիրրուրի, սիմէսինների եւ այլ երկրների հարեւանութեամբ, համադրում է ժամանակակից Ուզման/Օլաման բնակավայրի ու աւերտած թերդի հետ Արեւելեան Տիգրիսի Շատախ վտակի վերին հոսանքի եւ ակունքների շրջանում: Տես՝ Յարութիւնեան, էջ 18, 206 եւ 253: Այն, իր տարրերակներով, թերեւս կարելի է համարել Սիմէսեան Արմանիի յետազայ յիշատակութիւնը՝ հաշուի առնելով ասորեստանեան սեպազրերում ա-ի փոխարինումը ու-ի եւ ր-ւ- հերքազայութեան հնարաւորութիւնը:
22. Մուծածիրը (Մուսասիր) տեղադրում է Ուրմիա լճից հարաւ-արեւմուտք, Մեծ Զապի ձախագինեայ հովտում, ժամանակակից Ուեւանդուզ եւ Սիստեկան քաղաքների շրջանում, եւ ենթադրում է, որ իր անունն է բողել այժմեան Մուծեսիր բնակավայրին: Տես՝ Յարութիւնեան, էջ 144-145:
23. *Հայ Ժողովրդի Պատմութեան Քրիստոնակիա*, հու. 1, Երեւան, 1981, էջ 22: Ասուրա-քարելական արձանազրութիւնների քարզմանութիւնը՝ Հ.Ս. Աւետիսեանի: Այսուհետեւ՝ ՀԺՊԸ:
24. Նշուած բոլոր փաստերն օգտագործելուց յետոյ՝ Ն.Վ. Յարութիւնեանը անհասկանալիօրեն Գիլգամ(ու) երկրը տեղադրում է Ուրմիա լճի արեւմտեան առափնեայ շըրջանում, ինչը հակասում է փաստերի տրամաբանութեան եւ ընդունելի չէ:
25. ՀԺՊԸ, էջ 31-32:
26. Տես՝ Երեմեան, էջ 46:
27. C.F. Lehmann-Haupt, *Armenien einst und Jetzt; Reisen und Forschungen. II, Auf chalischer und griechischer Spur im Türkischen Ostarmenien, in Nordassyrien und von grossen Zab zum Schwarzen Meer*, 1, Berlin/Leipzig, 1926, s. 320.
28. Յարութիւնեան, էջ 15-16:
29. Նոյն, էջ 38, 193-194:
30. Նշենք, որ Արամալի/Արմարիլին Վանայ լճի հիսխում եւ հիսխս-արեւելեան շրջաններում տեղադրողները առաջարկել են այս թերդարադարների իրենց տեղորոշումը, սակայն մենք ընդունելի չհամարելով երկրի նման տեղորոշումը ընդհանրապէս՝ չենք անդրադառնայ նրա առանձին բնակավայրերի վերաբերեալ յայտնուած կարծիքներին:
31. Երեմեան, էջ 35:
32. Յարութիւնեան, էջ 42:
33. Երեմեան, էջ 39: Ըստ Երեմեանի՝ Արեւանոս անոնը պէտք է որ կապուի Վանի քաջաւորութեան դիցուի Արուրանայի (գերազոյն աստուծոյ կինը) սրբավայրի հետ, որի տեղում յետազայում կառուցուել է Ս. Բարբուժիմէոս վանքը:
34. Երեմեան, էջ 53:
35. Անհրաժեշտ է չփորել Վերին Խունդուրնայի եւ Ներքին Խունդուրնայի հետ, որոնք բուարկուած են Սանգիրութու երկրի ամրացուած քաղաքների շարքում եւ տեղադրութ

- Ես Ուրմիյոց լճից հիւսիս-արեւելքը: Տես՝ Յարութիւնեան, էջ 233:
36. Այստեղ է տեղի ունեցել 1896 թուի Խանասորի յայտնի մարտը:
  37. Թ.Խ. Յակոբեան, Ստ. Տեղիք-Քախչեան, Յ.Խ. Բարսեղեան, *Հայասպանի և Յառակից Ծրջանների Տեղամունքների Բառարան*, հոդ. 2, Երեւան, 1988, էջ 643: Ի դեպ Խանասոր անոնք վկայուած է Խանասոր և Խանեսոր տարբերակներով: Տես՝ նոյն:
  38. Ասորեստանեան սեպագրերում՝ Ռուսա անոնք:
  39. Սարդուրի:
  40. ՀԺՊ. էջ 31–32:
  41. Վասպոր՝ «ազնուական»: Պահլաւերէն Vaspruhrakan՝ «Սասանեան պետութեան ազնուականների բարձրագոյն դասակարգը կամ ամենից ազնուական եօրը ընտանիքների անդամները»: Այս մասին տես՝ Հր. Ամառեան, *Հայերէն Արմագուական Բառան*, հոդ. Դ., Երեւան, 1979, էջ 310. ս. 2.
  42. Խորենացին Արծրունիներին համարում է արքայական ծագում ունեցող՝ միայն թէ սերած Ասորեստանի արքայ Սենեքերիմի հայրասպան որդիներից: Տես՝ Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, 1968, Գիրը Ա., զլ. ԻԳ.: Խնչպէս Բագրատունիների ծագման հարցում՝ այսուղ եւս վրիպէլ է Պատմահայրը: Դա բաւականին հանգամանալի կերպով ցոյց է տրուած Ե. Բարխուտարեանի «Հայկական Արծրունի նախարարական տոհմի ուրարտական ծագումը» յօրուածում, որին համար տես՝ *Հետպագուուրիւններ Արեւելքի ժողովուրդների Պատմութեան և Մշակոյրի Մասին*, (Յօդուածների ժողովածու՝ ի պատի ակադեմիկոս Ի.Ա. Օրբելու), Մովսէս/Լենինկուրատ, 1960, էջ 23–33 (ոռուերէն): Հու՞ ի մի են թերուած Արծրունիների ծագման մասին միս տեսակալուները եւս: Յօդուածագիրը, ըստ ասորա-բարեկական մկրնաղբիրների, թերում է Սենեքերիմ արքայի սպանութեան ժամանակը Ք.ա. 881 թուի Նոյեմբեր-Դեկտեմբերին, եւ մատնացոյց անում դրանից շուրջ 120 տարի առաջ՝ Թ. դարի վերջին փորագրուած Սիերի Դրան արձանագրութեան մէջ յիշուող Արծրունինի (ճշգրտուած ընթերցումն է Արծրունինէ, տես՝ ՀԺՊ. էջ 45) բաղաքանունն ու Արծրբեդինի դիցանունը, որոնք կարելի է կապէլ Արծրունեաց տոհմի հետ: Ս. Բարխուտարեանը փորձում է Աղքակ զաւառանունը համադրել ասորեստանեան աղքիրներում վկայուած Արքակուն երկանուանը, ինչը, սակայն բննութիւն չի բռնում, քանզի Արքակուն տեղադրուում է Վանայ լճից հարաւ՝ Արեւելեան Տիգրիսի վտակ Սիներէրի արեւմտեան ափին եւ նոյնացուում է ժամանակակից Աւախ/Էւրաքի հետ: Տես՝ Յարութիւնեան, էջ 32. տես նաեւ՝ քարտէս, Բ.:
  - Արծրունիների հնդեւրոպական-հայկական ծագման մասին կարող է վկայել նրանց տոհմանունը: Այն բաղկացած է երեք բաղադրիչից՝ Արծ-ր-ունի: Վերջինը՝ ունի-ն՝ տոհմանուան յայտնի ցուցիչ է: **Արծ-ը** բնիկ հայկական արմատ է, որը ծագում է \*ar(e)g նախածնից եւ նշանակում է «սախտակ, փայլուն», այտելից էլ՝ «արծաք, արծնեմ, արծարծնեմ» բառերը: Տես՝ Գ.Զ. Զահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն-Նախագրային Ըլըջան*, Երեւան, 1987, էջ 56–57: – բ-ն իին հայերէնի վերջածանցներից է եւ ծագում է հնդեւրոպական ու վաղնջահայերէնի – \* (e)ro, - \* (e)ra ձեւից, եւ «հնդեւրոպական լեզուն կազմում է ածականներ, որոնք մասամբ գոյականացել են»: Տես՝ նոյն, էջ 234: «Արծր-» կը նշանակէ «փայլուն, լուսատը», թերեւս նաեւ՝ «սախտակիայլ, լուսափայլ», որը շատ կը պատշաճէր արքայական տոհմանուան իիմքին, մանաւանդ երը ի նկատի ունենանք արքայական իշխանութեան աստուածային ծագման մասին պատկերացումը հին աշխարհում եւ Վանի բազաւորութեան մայրաքաղաք Տուշպայի արեւի աստուած Ծիվինիի պաշտամունքի կենտրոն լինելը:
  43. Քիֆիշին, էջ 65:
  44. Ա. Քիֆիշինը Արամ եւ Ամ երկրները նոյնացնում է Նարամ-Սինի յիշաւակած Արմանիի հետ եւ կապում Ք.ա. առաջին հազարամեակի սեպագիր բնագրերի Արմէ երկ-

թիմ հետ, որը տեղադրում է Տիգրիսի վերին հոսանքի եւ Վանայ լճի շրջանում: *Տես՝ նոյն, եզ 65–66:*

45. Նոյն, էջ 66–67: Նոյն տեղում նա կապում է Արամ Երկրի և Վաճի քաջարորդեան արքայ Արամի անոնմերը, իսկ Արամ և Ամ Երկրների տիրակալ Խարշանատկի անուան առաջին բաղադրիչը՝ Խարշի Երկրանուան (Ք.ա. Գ. հազարամեակ) հետ։ Ծիփիշինը բաւարարում է միայն Եշելով այդ Երկրի Սիմուրրումից հիմսիս գտնուելը։ Այս մասին տես՝ նոյն, էջ 69։ Մեր կողմից աւելացնեմք, որ, մեծ հաւանականութեամբ, յիշեալ տեղանուն կարելի է նոյնացնել Աշորրանիպավի յիշատակած Խարսի լեռնանուան և Արգիշտի Ա.ի Խորխսոռեան տարեգրութեան մէջ յիշուող Արսիքա Երկրանուան հետ։ Երկուսն էլ տեղադրում են Ուրմիա լճից հարա՞ Մուծածիրի, Մանայի և Ասորեստանի միջնու։ Տես՝ Յարութիւնեան, էջ 40–41։ ՀՃՊ. էջ 61–68, և ժամանակ 30։ Վաճի քաջարորդեան բնագրերի քարգմանութիւնն ու ծանօթագրութիւնները՝ ՀՀ. Գարակեօթեան։

46. Ե. Քաստինի, *Նախահայկական Հայաստան*, Պեյրով, 1950, էջ 32։

47. Հ.Ս. Աւետիսիսան, «Հնագոյն տեղեկութիւններ Հիսիսային Սիջագետքում և Հայկական Լեռնաշխարհում արամեական ցեղերի տարածման մասին», *Պատմա-Քանակիրական Հանդես*, 1984, թի 3, Երևան, էջ 37–44 (ռուսերեն)։

48. Ա. Ծիփիշինը հաղորդում է, որ Ֆ. Թիփրո–Դանցկը ոչ մի կապ չի տեսնում Արամ և Ամ Երկրների ու արամեացիների ցեղանուան միջնու, որի հետ համաձայն չէ Շ–Ռ. Քուփերը։ Ծիփիշինը ես միանգամայն տարբեր է համարում դրանք, Արամը համարելով Հայաստանի հնագրյան անուանումներից մէկը։ Տես՝ Ծիփիշին, էջ 66։

49. Խորենացին հաստատում է, թէ «Արամի մասին պատմում են, թէ շատ քաջագործութիւններ է կատարել յարական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր Երկիրը...»։ Տես՝ Խորենացի, Գիրը Ա. Գլ. ԺԲ.։

50. Արմենիա անուան հնագոյն 15 յիշատակութիւններ են հասպուած Գավործեանի կողմից։ Տես՝ Martiros Kavoukjian, *Armenia, Subartu and Sumer*, Montreal, 1987, pp. 1–2 ff. Տես նաև նոյնին հայերեն, Մարտիրոս Գավործեան, *Արմենիա, Սուրարդու և Սումեր–Հնդեւրուպական Հայրենիքը և Հին Սիջագետքը*, Պեյրով, 1988, էջ 15–16 և յետոյ։ Ար(ա)մ հիմքով տեղանունների ի մի բերման փոքր է արուած մեր յիշուած յօդուածում, որի համար տես՝ ժամանակ 4։ Այլ հիմքով տեղանունների համապարփակ ուստմնասիրութիւնը, սակայն, մնում է ապագայի խնդիր։

44-45

# THE COUNTRY CALLED ARAM

(Summary)

ARTAK MOVSISIAN

According to Moses of Khoren, the Father of Armenian History, Aram, the first mentioned Armenian patriarch, unified all the lands of Haik's inheritors and founded the first united Armenia: this is why foreigners called the new country Armenia, after his name. Whatever the fact, Assyrian, Babylonian, Urartian, Sumerian, Akkadian and Mari inscriptions mention Am, Aram, Arame, Umanum, Aramarili and Aramali, which in the long run of analysis amount to the same meaning — Armenia, and when located on land, all come to occupy almost the same region between the lakes of Urmia and Van and directly correspond to that Armenian area which was later to be known as Vaspourakan.

A meticulous analysis of the Assyro-Babylonian, as well as of the Urartian and other inscriptions found and unearthed from various places trampled by the imperial victorious armies of the past reveal the congruancy of this region to that of Van, later Vaspourakan, which was the Royal Hereditary Domain of the Arzrunis of Armenian history. In fact, Vaspourakan being a derivation of "vaspour", a Parthean word meaning "noble", indicates that particular region of land which, according to various inscriptions and the information handed to the latest generations by Thovma Arzruni, the historian of the Arzruni Dynasty of the Armenian rulers, was the Royal Inheritance and Domain, that is the Hayrakan Toon, the Paternal Home, which means "hereditary domain."

After making a minute use of different inscriptions and informations, the author finds that the country called Aram/Arame is to be located to the north of the land between Greater and Lesser Zabs, the two tributaries of the Tigris river, on the west of the lake of Urmia, and on the east and southeast of the lake of Van, while that which is called Aramali/Aramarili is to be located between the lakes of Urmia and Van having the Korduk mountains (now Hekiar) to the south. A closer look at the topographic maps of these two separately named yet belonging to the same area will prove the identity of the two regions, though called by different names in the various inscriptions of Naram-Sin, Sargon I and Sargon II, Salmanessar III, Asurnazirbal, Rusa, Menua, and in a host of Sumerian, Mari and Eblayan inscriptions, thus irrefutably proving that countries called Aram, Arame, Am, Armani, Aramali, Aramarili, Armanum, Umanum and Mana (=Minni) are the same and one, historically are the appellations of the same region given by different peoples for Aram-Urartu, and hence show the continuous existence of the Armenian people on the same spot with the same hereditary land and occupying a non-broken line of history from the distant past to the present day.